600.0093.27.04.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 ապրիլի 2016 թվականի №93Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի №65Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, սեփական և տնտեսական կարիքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի հաշվարկի մեթոդիկաները հաստատելու մասին» №65Ա որոշման 1-ին կետի 1.1 ենթակետով հաստատված №1 հավելվածի՝ 0.38-35 կՎ լարման էլեկտրական ցանցերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկայի 6-րդ գլխի վերնագրից հետո լրացնել պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սակագներում ներառվող էլեկտրաէներգիայի չափագիտական կորուստների հաշվարկը իրականացվում է «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հաստատված էլեկտրաէներգիայի չափագիտական հնարավոր թերհաշվառման մեթոդիկայի համաձայն: Մյուս դեպքերում

էլեկտրաէներգիայի չափագիտական կորուստներին վերաբերող հաշվարկը իրականացվում է համաձայն ստորև նշված բանաձևերի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
27 ապրիլի 2016թ.